ԵՐԵՎԱՆԻ Հ. 175 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2022-2023 ուսումնական տարվա

Երգչախմբի թեմատիկ պլան

Խմբավար՝ Լ. Չուլջյան

Երգչախմբի ծրագիր

Բացատրագիր

Դպրոցական երգչախումբը համարվում է արտադասարանական գեղարվեստական աշխատանքի ամենակարևոր տեսակներից մեկը: Երգչախմբի պարամունքները նպաստում են սովորողների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և երգչական հմտությունների ամրապնդմանը: Երգչախմբի ընթացքում զարգանում են նաև սովորողների բարոյական որակները՝ մեկը մյուսին լսելու, հարգելու, օժանդակելու, համագործակցելու, ապրումակցելու կարողությունները և պատասխանատվության զգացումը, որոնք շատ կարևորվում են նոր ՀՊՉ-ում: Երգը ներգործում է սովորողի ներաշխարհի վրա, հուզազգացմունքային լիցք է տալիս նրան: Երգեցողության ընթացքում մասնակիցները կարողանում են ազատ արտահայտել իրենց ապրումները, հոգեվիճակը,, լիցքաթափվում են, ստանում մեծ հաճույք և բավականություն: Երգչախմբի պարապմունքներին կարող են մասնակցել բոլոր դպրոցականները, սակայն հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները և ձայնածավալը, խորհուրդ է տրվում ստեղծել տարբեր տարիքային խմբերի երգչախմբեր:

Երգչախմբի նպատակները

- Ձևավորել և զարգացնել խմբի անդամների երաժշտագեղագիտական ճաշակը
- Զարգացնել մասնակիցների երգչական ունակությունները՝ ճիշտ ձայնարտաբերում, շնչառություն, առոգանություն, ինտոնացիոն մաքրություն,
- Նպաստել միաձույլ հնչողությանը՝ ապահովել անսամբլային հնչողությունը,
- Զարգացնել ունիսոն երգեցողության կարողությունը,
- Ներկացնել ազգային խմբերգային երաժշտության պատմությունը և այսօր ՀՀ-ում գործունեություն ծավալող հայտնի երգչախմբերի ստեղծագործական գործունեությունը,
- Արժևորել ազգային և համաշխարհային բարձրարժեք խմբերգային կատարումները:

Խնդիրները

- Ստեղծել խմբավարի և խմբի մասնակիցների սերտ համագործակցություն, անխզելի կապ, ընդհանուր նպատակադրում,
- Նպաստել խմբի կատարողական մակարդակի բարձրացմանը
- Զարգացնել երգելու կուլտուրան, նպաստել արտահայտիչ երգեցողությանը
- Պահպանել և զարգացնել սովորողների երգչային ձայնը, հաշվի առնել նրանց տարիքային առանձնահատկությունները
- Ձևավորել և զարգացնել մասնակիցների վարքագիծը պարապմունքների և ելույթների ժամանակ:
- Ստեղծել խմբում բարի և համագործակցային մթնոլորտ:

Վերջնարդյունքները

- Կատարի բազմաթիվ միաձայն և բազմաձայն երգեր
- Կատարի երգերը մաքուր ինտոնացիայով,
- Արտահայտիչ,
- Համապատասխան տեմպով,
- Անհրաժեշտ նրբերանգով,
- Բառերի հստակ առոգանությամբ,
- Անսամբլի զգացողությամբ:
- Ակտիվ մասնակցի դպրոցական և համայնքային միջոցառումներին,
- Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, այցելի համերգասրահներ:
- Դառնա հայ ազգային երգարվեստի կրողն ու սերունդներին փոխանցողը:

Խմբակը նախատեսված է իրականացնել 3 տարիքային խմբերի համար՝

1. Տարրական դպրոց
2. Հիմնական դպրոց
3. Ավագ դպրոց

Թեմատիկ պլանավորում

N	Երգի վերնագիրը	Երգի հեղինակը	Խմբերգի տեսակը (միաձայն, երկձայն□□□)	Ժամերի քանակը
1	Ապրել խաղաղ	Լ. Գրիգորյան	միաձայն	22ժամ
2	Էրեբունի-Երևան	Է□ Հովհաննիսյան	միաձայն	33ժամ
3	Լեբլեբիջիների խմբերգը	Տ□ Չուխաջյան	միաձայն	22ժամ
4	Միասնության շուրջպար	Լ□ Սարիբեկյան	միաձայն	22ժամ
5	Զեյթունցիների քայլերգը	Տ□ Չուխաջյան	միաձայն	22ժամ
6	Զայն մը հնչեց	հայկ□ ժող.	միաձայն	22ժամ
7	Սարդարապատ	Է□ Հովհաննիսյան	միաձայն	22ժամ
8	Տղերք, որոնք չկան	Ա□ Բաբաջանյան	միաձայն	33ժամ
9	Անձրևն եկավ	Կոմիտաս	միաձայն	11 ժամ
10	Երկինքն ամպել է	Կոմիտաս	միաձայն	11ժամ
11	Քելե-քելե-	Կոմիտաս	միաձայն	11ժամ
12	Երազի իմ երկիր	Ռ□ Ամիրխանյան	միաձայն	33ժամ
13	Երգ պառապանծ	Ա□ Բաբաջանյան	միաձայն	33 ժամ
14	Մենք պետք է կռվենք	հայկ□ ժող□	միաձայն	11ժամ
15	Այս զարունը քեզ համար	Ա□ Սմբատյան	միաձայն	33 ժամ
16	Կովկասի քաջեր	հայկ□ժող□	միաձայն	11ժամ
17	Երևանը մենք ենք	Ֆորշ	միաձայն	11ժամ
18	Անցած երգերի կրկնություն			11ժամ